Kristine Kh. Melkumyan

NAS RA The Institute of Literature after M. Abeghyan

kristine.melqumyan.83@mail.ru

Different events of Armenian history in the textbooks of the 18-19th centuries Armenian settlements

The works of the Armenian medieval historians were not only the sources of the Armenian history, but also for the national pride and self-awareness of the Armenians spread all over the world. This is the reason why in the 16-18th centuries there were lots of manuscripts as well as the printings in 17-19th centuries.

The same circumstance is conditioned by the inclusion of different sections of the Armenian historiography in the textbooks and educational manuals published in the 18-19th centuries Armenian settlements.

This fact is evident in the textbooks published in the Armenian settlements in Europe. These textbooks comparatively present the materials about the Armenian language, history and literature.

This report shows the place of the Armenian history and the following questions are examined:

1. Which historians and events of the Armenian history were allocated more particularly?
2. Are the cited materials directly extracted from the historians or are they somehow recorded to become publicly available for contemporary readers?
3. To what extent are the rewritten parts of the materials influenced by /Grabar/ or are they written in a new literary Armenian?
4. How are the national-ecclesiastical (adoption of Christianity, invention of alphabet) and heroic events in the Armenian history (Battle of Avarayr, Rampart of Ani) presented?
5. The article also examined whether the same historical event for different age groups is presented in the textbooks and if it helps to recognize Armenia and to love it.

What measures were taken to preserve the children national identity in European environments simultaneously integrating and forming the part of the European value system?

The report notes that the chapters from these, especially in those published by Venetian Mkhitarists, served to preserve national identity and form moral perceptions.

Քրիստինե Մելքումյան

ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ

kristine.melqumyan.83@mail.ru

Հայոց պատմության տարբեր իրադարձությունները 18-19-րդ դարերի հայ գաղթավայրերում տպագրված դասագրքերում

Հայ միջնադարյան պատմիչների ստեղծագործությունները ոչ միայն հայ ժողովրդի պատմության սկզբնաղբյուրներն են եղել, այլև ազգային հպարտության և ինքնաճանաչման միջոց ճակատագրի բերումով աշխարհով մեկ լցված հայերի համար: Այս պատճառով է, որ XVI-XVIII դարերում մեծ թիվ են կազմում հայկական գաղթավայրերում հայ պատմիչների ձեռագիր ընդօրինակությունները (արտագրությունները), ինչպես նաև տպագրությունները XVII-XIX դարերում:

Նույն այս հանգամանքով է պայմանավորված հայ պատմիչների գործերի տարբեր հատվածների զետեղումը հայկական գաղթավայրերում 18-19-րդ դարերում տպագրված դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում:

Այս հանգամանքը ցայտուն է արտահայտվել հատկապես Եվրոպայի հայկական գաղթավայրերում տպագրված դասագրքերում:

Այս դասագրքերն ունեն համադրական (սինթետիկ) բնույթ՝ ներկայացնելով հայոց լեզվին ու պատմությանը և գրականությանը նվիրված նյութերը:

Ձեկուցման մեջ ցույց է տրվում, թե այդ դասագրքերում ինչ տեղ է հատկացվել հայոց պատմությանը և քննվում են հետևյալ հարցերը.

1. Հատկապես որ պատմիչներին և հայոց պատմության որ իրադարձություններին է ավելի մեծ տեղ հատկացվել:
2. Բերվող նյութերն արդյոք ուղղակիորեն պատմիչներից վերցված հատվածներ են, թե դրանց որոշակիորեն հանրամատչելի վերաշարադրանքներ այդ ժամանակի ընթերցողների համար:
3. Պատմիչների վերաշարադրված հատվածները որքանով են կրում գրաբարի ազդեցությունը և որքանով են նոր գրական ձևավորվող հայերենով գրված:
4. Դասագրքերում բերված նյութերում ինչ հարաբերակցություն են կազմում ազգային-եկեղեցական (քրիստոնեության ընդունում, գրերի գյուտ) և հայոց պատմության հերոսական իրադարձությունները (օր. Ավարայրի ճակատամարտը, Անիի պաշտպանություն):
5. Ուսումնասիրվում է այն հարցը, թե միևնույն պատմական իրադարձությունը տարիքային տարբեր խմբերի համար ինչպիսի վերաշարադրանքով է ներկայացված: Այն ինչպես է օգնում ճանաչելու Հայաստանը և սիրելու այն:

Ինչ միջոցներ են գործադրվել եվրոպական միջավայրում գտնվող երեխաներին պահպանելու իրենց ազգային ինքնությունը՝ միաժամանակ ինտեգրվելու և մաս կազմելու եվրոպական արժեհամակարգին:

Զեկուցման մեջ այն միտքն է ընդգրկվում, որ հայ գաղթավայրերում և հատկապես Վենետիկի Մխիթարյանների կողմից տպագրված դասագրքերում հայ պատմիչների գործերից վերցված հատվածները ծառայել են ազգային ինքնության պահպանմանը ու հոգևոր բարոյական ըմբռնումների ձևավորմանը: